

# ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ

ՍԱՏԹԵՌՍ ԱԽԵՏԱՐԱՆՉԻ ՆՈՐԱՅԱՅ  
ՊԱՏԿԵՐԸ ՄՄ ՀՄՐ 5546 ՁԵՌԱԳՐՈՒՄ

## Մեղա Մանուկեան

**Մ**ատենադարանի Հմր 5546 ձեռագրի նկարազարդ էջերը, մասնաւորապէս սկզբում առկայ՝ Մատրես աւետարանչի հետսամուտ՝ սկզբնապէս ձեռագրին շպատկանած մանրանկարը (նկ.1) շատ հետաքրքրական և ուշագրաւ են(1):

Հմր 5546 ձեռագրի գրչութեան ժամանակի յիշատակարանը յայտնում է. «Էջաւառակ է սուրբ Աւետարան Բատենցի Ալեքսիանու արելիս, ի դուռ Սուրբ Կարապետիս և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Հրեշտակապետացն Գաբրիէլի և այլ բազմահասաք սրբոց, որ աստ կան կառուցեալ: Ես՝ Ալեքսիանոս, զրեցի զուրբ Աւետարան և եղի յիշատակ ինձ և ծնաւուց իմց՝ Մարտիրոսին և Եղիարքին... Արդ, զրեցա սուրբ Աւետարան ի սուրբ անապատու, որ կոչի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Կարապետիս և Սուրբ Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի թուականիս Զ. Եւ Զ. (1531)...»(2): Ըստ այսմ ձեռագրի գրիցն ու ստացողը Ալեքսիանու Բատենցին է, և այս մատեանը 1531 թ. օրինակել է Կարմիր վանքում:

Յիշատակարանում որոշ տեղեկութիւն կայ Կարմիր վանքի նախին. «...զի Կարմիր վանքս ի վերայ ապառած քարի է, հողն կարմիր է, յարեւելից կողմն Ազգայրակն է և Պաւանն, յարեւմտից դեհն սրբեան հազ-

րին եւ Աղկաւն, հարաւային կողմն Զնշկածագ քաղաքն, իհասային կողմն Ակներն եւ Սեղմայ լեան»: Խօսքը Արեւատեան Հայաստանի Խարբերդ նահանգի, Դերսիմ գաւառի, Զնշկածագ գաւառակի նոյնանուն գիլաքաղաքի 16-17 կմ հիւսիս-արեւելք գտնուող Կամիր վանքի մասին է(3), որը յայտնի է նաև Ազրակու Կարմիր վանք, Կարմիր վանքի Ս. Նշան, Զնշկածագի Ս. Նշան անուներով: Կառուցուած է քառուսներով և կաղնու խիտ անտառներով ծածկուած բլիյ վրայ: Ենթադրաբար հիմնադրուել է ԺԴ. դարում(4), ԺԸ. դարի վերջերից աւազակարարոյ ցեղերը բազմից ասպատակել ու կորուտել են վանքը: Պահպանուել են Կարմիր վանքում գրուած ԺԵ-ԺԷ. դարերի մի քանի ձեռագրեր՝ ՍՍ Հմր 7246, 487, 7850, 4163, որոնցից երկուսը նկարազարդ չեն, Հմր 7850-ն ընդհանրութիւններ չունի մեր ձեռագրի հետ, իսկ Հմր 4163-ը որոշ աղերսներ ունի լուսապսակների և զարդագրերի հարցում:

Ըստ Աստոիկ Գերգետանի՝ Կարմիր վանքը Բատենում է(5), հաւանաբար նկատի ունի Սեծ Հայքի Այրարատ աշխարհի Բատեն գաւառի Ս. Աստուածածինը(6), որ յայտնի է նաև Հասանկալայի Ս. Աստուածածին անունով, նոյնանուն քաղաքից 5 կմ հիւսիս, Արաբի ծախ կողմուն, Ծիրանաց լեռների հիւսիս արեւելեան լանջին է(7): Սակայն մեր ձեռագրի յիշատակարանի՝ Կարմիր վանքի տեղադրութեան նկարագրութիւնը նիհանգամայն այլ քան է ասում, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ այս ձեռագրը Բատենի Կարմիր վանքի հետ կապ չունի: Աւելին՝ Բատենի Ս. Աստուածածին վանքում գրուած՝ Մատենադարանի Հմր 7137 ձեռագիրը Հմր 5546-ի հետ որևէ ընդհանրութիւն չունի:


Հմր 5546 ձեռագրի հետագայ մի յիշա-



Զնշկածագի կիսասեր վանքերէն մին



Կարմիր վանքի աւերակները



Կտոր անապատ, Վանայ լիճ

տակարանում նշում է, որ 1677թ. այն կազմը-  
ւել է Մինաս Արենայի պատուրով, հաւա-  
նարար Արտեն քարտուղարի ծեռովով: Կազ-  
մանատարին փակցուած բրդին գրուած է.  
«Ե. Լալյայ[»]անի ցուցակ, № 458, հին թի 232,  
Կտոր», իսկ 3ա էջում Բ. դարի շղագրով  
ասում է, որ ձեռագիրը յիշատակ է Կտոր Անապատի: Ձեռագիրը կրինագիր Աւետարան  
է, ենթադրար Ժ. դ., մազադար է, երկ-  
սին (33x18), բոլորից երկարագործ, արտա-  
քին լուսանցքների և գրադաշտի չափերից  
ենթերմ, ձեռագիրն ունեցել է 39x27 չափերը:  
Կրկնագիր թերթերը ընդլայնակի ծալուել  
են և օգտագործուել մեզ հասած ձեռագիր  
համար: Ձեռագիրն ունի չորս աւետարա-  
նիների պատկերներն անուանաբերենով, որոնց կ'անդրադառնանք աւելի ուշ, լուսան-  
ցագարդեր, որոնք բուսական, կենդանական  
նախշեր են, նաև՝ տաղաւարիկ, յուշկապա-  
րիկ և սափոր: Հետաքրքրական են նաև  
զարդագրերը՝ մարդագիր, բռնագիր, կենդա-  
նագիր, ինչպէս նաև՝ մարդադէմ մտացածին  
կերպարներ:

Ինչպէս արդէն նշեցինք, բուն ձեռագիրը  
մազադարնայ է, բայց Մատքեռ Աւետարանի  
պատկերը, որը, ինչպէս արդէն զիտենք, բուն  
ձեռագիրն չ պատկանում, ներմուծուած էջ է՝  
բրդից, եզրահաստած, 19x23,5 չափերով: Այս  
էջը կտրուած է, երեք կողմերից լրացուած է  
քորք կարկատաններով և յարմարեցուած է  
բուն ձեռագիր չափերին: Այսուեղ գործ ունենք  
աւետարանի գլուխակարչական շրեղ պատկեր  
ստեղծած մի ծաղկոյի հետ, որի ոճական  
մօնեցումները, լուսաստուերի կիրառումը,  
հեռանկարի լուծումը բացադրիկ են մեզ յայտնի  
օրինակների շարքում:

Նկարի դաշտը պատուած է ուկով, աւ-  
տարանի պատկերը շատ մոնումենտալ է,

խոչոր, նստած է աջ կողմում. և հետաքրք-  
րական է, որ այսքան խոչոր մարմնի համե-  
մատ ունի փոքրիկ ոտքեր: Նա ալեհեր է, մեծ  
լուսապսակով, դիմագծերը շատ նորը են և  
արտայայտիչ, աջ ծեռիկ գրի է, միս ծեռը  
ծենկներին դրուած գրի վրայ է, որի վրայ  
գրուած է. «Գիրք ծերնդեան Յիշուսի Ծրիս-  
տոսի որբոյ Դաւթի», որն, ի դեպ, բուն  
ծեռագիր գրի արած յաւելում է: Աւետա-  
րանիշը նստած է սեւ որուազժմանք, ոսկով  
լցուած դաշտով, երկրաշավական նախշերով  
գրագիր վրայ: Հազուստի ներքնաշավայիկը երկ-  
նագայնի մուգ և բաց երանգներով, իսկ  
պարեգօտը՝ վարդագոյն է: Աւետարանին  
շրջապատող առարկաները մեծապիր են,  
գրակալը եւս բաւական խոչոր է և հեռու է  
պատկերուած, ինչը ծաղկողին օգնել է լուծել  
հետանիքարի խնդիրը: Նկարի կտրուած հատ-  
ածները թոյլ չեն տալիս ամրողական  
պատկերացում կազմել հսորի ճարտարա-  
պետական մասի վերաբերեալ: Սեան մի  
հաստուածն է պահպանուած, որին վարագոյն է  
վարարուած, սեան մի հաստուած էլ գուցէ  
ինչ-որ տաղաւարիկի նաս է կազմել: Ներ-  
կայացուած մանրամասները փաստում են,  
որ այս պատկերը բաւական մեծապիր ձեռագիր  
է պատկանել:

Այս նկարի շարունակութեան մի փոքր  
հաստուած երեսում է 7թ էջում, որը պատկե-  
րացում է տախիս, թէ նկարի կտրուած և  
լրացուած հաստուածները որքան են կազմում:

Այս աւետարանի ծաղկողը կիրկեան և  
բիզանդական աւանդոյներին քաջատենեակ  
մէկն է եղեւ, ով հրաշալի տիրապետել է  
մանրամակարչութեան արուեստին: Աւետարանի  
դիմագծերը մշակուած են մանրամասնօրէն,  
ընդուած մինչև աշքերի տալիս ակօսները:  
Կոպերի վերին մասից քաշած գծերը անմի-  
ջական զուգահեռներ ունեն բիզանդական  
աշքերի յայտնի պատկերածների հետ, այդ  
բուն աշքերի տակի ակօսները: Բացի սպի-  
տակ սոսուերագծերից, ծաղկողը կիրառել է  
նաև շազմակագոյն մանր ստուերագծեր:

Մանրամակարի ոշափի քննութեան ժա-  
մանակ նկատեցինք, որ աւետարանի ծենկնե-  
րին դրուած գրի գրութեան բանաքը  
գոյնը նման է ինչպէս աւետարանի հանդեր-  
ձանքի գոյներին, այնպէս էլ անուանաբերթի  
գոյներին: Գրակալի ներքեւի հաստուածի  
գրոգի դաշտը վաս կարմրանարնջագոյն է, որը  
գունային լրացման-թարմացման հետեւանք է:

Վարագոյրի և բարձի կարմիրը եւս լրացման-քարմացման հետքեր ունի, դրա մասին է վկայում նաև բարձի՝ սեւով ուրուազդուած դաշտից դուրս եկած գոյնը: Յատկապէս գորգի դաշտի կարմրանարնջագոյնը համապատասխանում է աւետարանչի խորհրդանշանի հանդերձանքի գոյնին, նոյնը վերաբերում է կապոյտին: Սա վկայում է այն մասին, որ անուանաբերի ժաղկողը աւետարանչի պատկերը գունային լրացման-քարմացման է ենթարկել, և բացառուած չէ, որ ինքն էլ աւելացրել է այդ էջը:

Լրացման-քարմացման մասին է փաստում նաև Մատքես Աւետարանչի պատկերի շրջանակը, որը ծախ կողմում և ներքեւում գունային լրացման միջոցով շրջանակուել է: Մանրանկարի ամբողջ դաշտը բազմարի մանր ճարեր ունի: Միւս անուանաբերերի գունային և ոճական լուծումները եւս նոյնն են և համապատասխանում են լրսանցազարդերի մշակումներին: Այսպիսվ, ստացում է, որ Հմբ 5546 ձեռագրի անուանաբերերի, լրսանցազարդերի և Մատքես աւետարանչի պատկերի գունային լրացման-քարմացման հեղինակը նոյն մարդն է, իսկ բուազրութեան հարցին կ'անդրադառնանք մի փորբ ուշ:

Առաջին հայեացքից մեզ մի պահ բուաց, թէ գործ ունենք ոչ հայ ժաղկողի հետ: Մեր ուշադրութիւնը գրաւեց այն հանգամանքը, որ դեռևս 1204 թ. Կոստանդնուպոլիսի գրաւումից յետոյ մեծ բռուվ յոյն նկարիչները արտօգաղել են(8) Սերբիա, Բուլղարիա, Վրաստան, Խոտայիա և Հայաստան, միաժամանակ, միջնադարեան Երոպա են հասել խաչակիրների կողոպտած բիւզանդական արուուստի նմուշները: Եւ գուց այդ ճանապարհներից մէկով էլ Հայաստան հասած լինելու այս ձեռագիրը կամ ստեղծուած լինելու Հայաստանում յոյն վարպետի կողմից, սակայն մանրանկարի ուշադրի քննութիւնը և զուգահետները հայկական աշխատանքների հետ հակառակն են փաստում՝ շնայած բիւզանդական մանրանկարչութեան հետ ունեցած մի շարք ընդհանրութիւններին:

Մեր աւետարանչի պատկերը, ինչպէս արդէն նշեցինք, հետաքրքիր գուգահեռներ ունի Կիլիկեան մանրանկարչութեան հետ՝ որպէս հետ-ոռավիմեան շրջանի շատ հետաքրքիր դրսեւրում: Խոչշոր մարմինը փորք ուսնարաքերով իր հետաքրքիր գուգահեռներն ունի Թոփագրուի հայկական մի

ձեռագրի՝ Սկեւուայում գրուած 1273 թ. աւետարանի հետ(9) (նկ.2): Ընդհանրութիւններ կան նաև աւետարանիչների ոսքերի տակի զարդաշրջանակով գորգի հարցում: Ավետայում ընդորինակուած այս ձեռագիրն իր վրայ կրում է ուսկինյան ոճի ազդեցութիւնը(10), յատկապէս «Ակրտութիւն» տեսարանի Ծրիստոսի և հրեշտակների պատկերների մէջ:

Մեր աւետարանչի պատկերը, ինչպէս նաև Թոփագրուի թանգարանում պահուող 1273 թ. Աւետարանը ոճական և պատկերագրական ընդհանրութիւններ ունեն ՍՍ Հմբ 345 (1270 թ.) Աստուածաշնչի հետ (նկ. 3), որը Յովհաննես արքաեղօր դպրոցի լաւագոյն օրինակներից է: Ընդհանրութիւնները հագուստի ժալկման, պարեզօտը մէջովով կապելու ծեփ, գրակալի, բարձով արռուակի, գորգի մէջ են: Ուշադրութեան է արժանի մազերի սանրուածքի մշակումը՝ ճակատի հասուածում երկշար բացուածքով: ՍՍ Հմբ 7644 (Սմբատ Գունդստարի աւետարան, 1260-70-ական թթ.) (նկ. 4) և 7648 (1270-ական թթ.) ձեռագրերում եւս նմանատիպ ընդհանրութիւններ կան, նաև՝ աւետարանչի կերպարի մանրանասն մշակումը և գրութիւնն աւետարանչի գրքի վրա: Այս երկու աւետարաններն էլ մի շարք ընդհանրութիւններ ունեն խորանների, անուանաբերերերի, լրսանցազարդերի և որոշ աւետարանիչների մասով ու վերագրուում են (11) Յովհաննես արքաեղօր դպրոցին: Այստեղ մեծ ուշադրութիւն է յատկացուած նաև ճարտարապետական խորքին, մեր աւետարանչի դէպրում շնայած ճարտարապետական մանրանասների ալույսուանը՝ դրանք, կարծես, երկրորդ պլան մղուած լինեն կարեւորելով աւետարանչի ներքին էներգիայով լի կերպարը: Մեր աւետարանչի պատկերի յօրինուածքը հաւասարակշռուած է ոչ միայն ծեւերի, այլև գունային շեշտադրումների շնորհի, ինչպէս ոռվիճնեան ծեռագրերում, այնպէս էլ մեզ մօտ ուկին տարածութիւնն է լցոնում:

Արդէն Ժ. դարսում կիլիկեան մանրանկարչութիւնն առանձնանում է բազմազնութեամբ և ճյխութեամբ, ոսկինեան պատկերագրական սխեմաները մի տեսակ կանոնի են վերածուում: Նոյն դարի 70-80-ական թթ., շարունակուում է ոսկինեան ոճի զարգացումը՝ յատկապէս ոսկեւրուելով անհանգիստ և դրամատիկ կերպարներուում: Ժ. դարի 90-

ականերից և ԺԴ. դարի սկզբից պատկերներն աւելի ծանր, զանգուածեղ են դառնում: Վերոնշեալ յատկանիշներն իրենց լաւագոյն դրսեւորումն են գտել մեր աւետարանչի կերպարում դասնայով յետ-ռոպիինյան շրջանի տիպական դրսեւորում. զոյնի, ծեփ, յօրինածքի հարստորին, ոճի ազատորին, ինչպէս նաև չափի հիանալի զգացում, որը լաւագոյն բնորոշ էր կիլիկեան վարպետներին: Բացառուած չէ, որ մեր աւետարանչի պատկերը արուել է կիլիկեան նախօրինակից: Ոճական և պատկերագրական առանձնայատկորինները թոյ են տալիս այս մանրանկարը բուազրել ԺԵ. դարով:

ԺԴ.-ԺԵ դր. բիզանդական ձեռագրերի աւետարանիշների պատկերները, հիմնականում, ծանր դիմազերով են, սուր կամ հաստ քրով, կտրուկ, երեմն գրոտեսկային պատկերներով: Լաւագոյն վկայութիւնը Սրբոյի Հմբ 407 ձեռագիրն է, ոնյնն է նաև յունական ձեռագրերի դէպրում, օրինակ՝ Քողյէեան գրադարանի Թէսայոնիկի «Յայսմասուր»ում (1322-1340թ. ց. թ. f. I S.C. 2919) կամ Վիեննայի գրադարանի Աւետարանում (ց.300)(12): Տարբերութիւնների հետ մէկտեղ՝ աւետարանիշների դիրքը ազատ է, շարժումները ծնկու:

Հարց է առաջանում, որտե՞ղ կարող էր ստեղծուել այս մանրանկարի մայր ձեռագիրը՝ հարուստ կիլիկեան մանրանկարչութեան թողած աւանդներով:

Հաշորի առնելով վերոնշեալ առանձնայատկորինները, ինչպէս նաև ժամանակաշրջանը՝ հետքերը մեզ տանում են Կիմի:

Կիմի հայաբնակ շրջանները մոնղոլական արշաւանքների, նաև՝ կիլիկեան հայկական թագավորութեան անկման հետեւանքով մարդաշատ են դառնում յատկապէս ԺԴ. դարում:

ԺԴ.-ԺԵ. դարերը Կիմի հայկական մանրանկարչութեան ծաղկման շրջանն են: Ուշագրաւ է այս հանգամանքը, որ դրմեցի վարպետները՝ որպէս օրինակ, օգտագործել են կիլիկեան ձեռագրեր կամ պարզապէս կրկնօրինակել են առանձնապէս ճոխ ձեռագրերը, որի լաւագոյն ապացոյցն են Ութ մանրանկարիչների (ՍՍ Հմբ 7651) և Սնրատ Գունդստարի աւետարանից, ունի մի շարք առանձնայատկորինները, յատկապէս աւետարանինների պատկերներում, որոնք աւելի նրօրուեն են արուած, մարմիններն աւելի կրտաւուն և ծաւալային անելու ծգուու կայ: Այս առունով, աղերսները մեր աւետարանչի պատկերի հետ աւելի շատ են:

Մարդու մարմնի և դիմազերի ճիշտ մշակումը ինչպէս Կիմի մանրանկարների,

յուրօրինակ գծեր, որոնցով տարբերում են նրանց աշխատանքները:

Ի հակադրութիւն մեր աւետարանչի մանրանկարի Կիմի ԺԴ. դարի մանրանկարներն աշքի չեն ընկնում ուկու կիրառութեամբ, իսկ խորքի համար նախապատրիմնը տրտում է մուգ կապոյտ գոյնին:

Կիմի հայկական մանրանկարչութեան վրայ որոշակի ազդեցութիւն են ունեցել նաև Բիզանդիայի և Խոտայիայի արուսատները, որոնք ներքափանցել են հայկական վանքերի միջոցով և այդ երկրների հայ բնակչութեան, ինչպէս նաև Կիմի յոյն և խորացի բնակչութեան հետ ունեցած անմիջական չփումների միջոցով(13): Բարձր Հայքի մանրանկարչութեան ձևերը եւս իրենց ազդեցութիւնն ունեն Կիմուն(14): Այդ առունով հետաքրքիր աղերսներ կան նաև Կարինի մանրանկարչութեան հետ կապուտ ՍՍ Հմբ 2653 (ԺԴ. դար, 1341 թ. առաջ) ձեռագրում (նկ.5), որտեղ աւետարանիշները ուկով արուած մեծ յասապանկով են, խորքի մի մասը դարձեալ ուկով է: Մատրէուսի պատկերը բացակայում է, Մարկոսը մեծ չափերի և պատկերուած գրիշ սրեկիս շարժման պահին: Նստած է բարձր ոտնակմերով արուակի վրայ, հագուստի վեցը ծածանում է, առարկաների դասադրութեան շնորհի շատ հետաքրքիր է լուծուած հեռանկարի հարցը: Գրակալն աւետարանի դիմաց է, բայց իրենից բաւական հեռու կամարածն ոտնակմերով պահարանի վրայ:

Կիմի ԺԴ. դարի հայկական մանրանկարչութեան օրինակների (ՍՍ Հմբ 7337, 7598, 7750, 10598) հետ մեր աւետարանչի պատկերի ընդհանրութիւնները հիմնականում դիմազերի մշակման մէջ են: Դրանք շատ գեղանկարչական են, ինչպէս մեր աւետարանչի դիմազերի մշակման դէպրում: Հետաքրքական են զուգահեռները Կիմի ԺԵ. դարի ՍՍ Հմբ 7686 ձեռագրի հետ (նկ. 6), որը, շնայած կրկնօրինակուել է Սմբատ Գունդստարի աւետարանից, ունի մի շարք առանձնայատկորինները, յատկապէս աւետարանինների պատկերներում, որոնք աւելի նրօրուեն են արուած, մարմիններն աւելի կրտաւուն և ծաւալային անելու ծգուու կայ: Այս առունով, աղերսները մեր աւետարանչի պատկերի հետ աւելի շատ են:

Մարդու մարմնի և դիմազերի ճիշտ մշակումը ինչպէս Կիմի մանրանկարների,

այնպէս էլ մեր աւետարանչի դէպօւմ որմնանկարի տպաւորութիւն են քողմում: Սա այն զիսաւոր առանձնայատկութիւններից մէկն է, որը բոյլ է տալիս մեր մանրանկարը կապել Դրիմի հետ: Այսպիսով, մեր պատառիկը գուցէ կիլիկեան նախօրինակով Դրիմի հայ քարաետի աշխատանք լինի՝ ստեղծուած մի միջավայրում, որտեղ քաջատեղեակ են եղել բիզանդական և կիլիկան մասնանկարչութեան աւանդոյթներին և կերտել են յետ-ոռովինյան շրջանի լաւագյն մի պատկեր:

Առանձնայատուկ հետաքրքրութիւն ունեն ծեռագրի միա աւետարանիները, որոնք միանգամայն տարբեր են Մատքոսի պատկերից: Մարկոս Աւետարանիչը նկարուած է Մատքոսի աւետարանի բնագրի վերջում երկարաւուն ուղղանկին շրջանակի մէջ (նկ. 7): Աւետարանչի պատկերի խորքը խոր է յիշեցնում, աջ կողմում երկրաչափական նախշեր են: Աւետարանչի պատկերը շատ ոճաւորուած է՝ սեւ որդուազծնամբ, մազերը և մօրուոք սեւ գծերով են մշակուած:

Սարկոս Աւետարանչի շրջանակի կարմիր քանաքը, ինչպէս նաև հագուստի կարմիրը նոյնանում են զիսաւորերի, նաև անուանարերի կարմրով արուած տառերի հետ, իսկ խորքի մանուշակագոյնը ննան է անուանարերի մանուշակագոյն տառերին, սա խօսում է այն մասին, որ աւետարանիների պատկերները անուանարերերին ժամանակակից են: Օգտագործուած նոյն գոյները վկայում են այն մասին, որ ծեռագրի անուանարերերը, լուսանցսապարդերը և արդին, փաստօրէն, երեք աւետարանիների նկարները ստեղծուել են գրչութեան նոյն կենտրոնում, նոյն ծաղկողի ծեռուով: Այստեղ հարց է առաջանում հնարաւո՞ր է արդեօր, որ զրի Ալեքսիանոս Քասենցին լինի ծեռագրի ծաղկողը: Զարդագորերի և լուսանցսապարդերի դասաւորութիւնը խօսում է այն մասին, որ, այս, հնարաւոր է, բայց աւետարանիների համար բռնուած փոքր տեղը, Ղուկաս աւետարանչի պատկերի (նկ. 8) դարձերեսին նկարուած անուանարերը (նկ. 9), նաև Ղուկասի պատկերի՝ ցրուացանկի մի մասը ծածկելու հանգամանքը կասկած են առաջացնում գրչի՝ ծաղկող լինելու հարցում:

Մարկոսի աւետարանից անմիջապէս յետոյ առանց տող քաց բողմելու, Ղուկաս աւետարանչի նախադրութիւնն է, նոյնը

նաև միւս աւետարանիների դէպրում է, իսկ սա վկայում է այն մասին, որ զրիշը տեղի խնդիր է ունեցել: Ստացում է, որ Մարկոս և Ղուկաս աւետարանիների պատկերները նկարուել են որպէս միջքնազրային մանրանկարներ: Դժուար է ասել, որ սա ծաղկողի անհատական մօտեցումն է, քանզի Յովհաննէս աւետարանչի պատկերը (նկ. 10) և անուանարերըն արուած են մեզ յայտնի սկզբունքով: Յովհաննէս Աւետարանիշը պատկերուած է Պրոքրոսուի հետ:

Հակուած ենք մտածելու, որ զրիշը հենց նոյն ծաղկողն է, պարզապէս սխալ հաշուարկի պաօնառով աւետարանիների պատկերների և անուանարերերի համար անհրաժեշտ չափի տեղ չի նախատեսել. ըստ այսմ ծեռագրի նկարազարդումն էլ երեք աւետարանիների պատկերներով, անուանարերերով և լուսանցսապարդերով գրչութեանը ժամանակակից է:

Այսպիսով, այս ծեռագրի օրինակով հերքական անգամ համոզում ենք, որ հայկական մանրանկարչութեան մէջ բազմաթիւ շրացայալուած զամներ կան, որոնք կարող են նոր լոյս սփուել այս կամ այն մանրանկարչական դարյոցի գործունեութեան վրայ՝ դատնալով տուեալ ժամանակաշրջանի հետարքիր դրսետրումներ:



ԵՄԱՐԱՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԻՄԻՆ





Նկար 1, ձեռ. No 5546



Նկար 2




Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6


## Ծանօթագրություններ

- 1.- Ընորհակալուրյում ենք յայտնում Սատենադարանի զինաւոր ասթղապահ Գևորգ Տիր-Վարպանեամին՝ խորհրդամբիր և ծովագրի հետ կապուած հարցերը ճշգրտելու համար:
- 2.- Այս ծեսագրի ընկարագրել է Մատենադարանի գիտաժողով Արևմբ Յարութիւննեամը:
- 3.- Տես Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ. Յակոբեան, Ստ. Տ. Սելիր-Բախչան, Հ.Խ. Բարսեղեան, Երեւանի Համապարանի Հրատարակութիւն, Երեւան, 1991, հատ. 3, ցուցակ 1, Էջ 57:
- 4.- Նոյն տեղում, էջ 57:
- 5.- Տես Ա. Գերգեան, «Անանուն հայ մամրամկարիչներ», Մատենագիտութիւն IX-XVII դդ., Գահիրէ, 2005, էջ 295:
- 6.- Տես Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ. Յակոբեան, Ստ. Տ. Սելիր-Բախչան, Հ.Խ. Բարսեղեան, Երեւանի Համապարանի Հրատարակութիւն, Երեւան, 1991, հատ. 3, ցուցակ 1, Էջ 58:
- 7.- Նոյն տեղում, էջ 348:
- 8.- Տես Ա. Լազարեան, Իстория византийской живописи, «Искусство», Москва, 1986, стр. 123:
- 9.- Այս հանգամանքի վրայ մեր ուշադրութիւնը իրադիրեց Հայ արտեստի պատմութեան և տեսութեան ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբողջ վայրի, արտեստարան Լեսոն Չուզավագրեան: Թոփանարութ հայկական ձեռագրերը նկարութիւնները մեջ կատարութիւն ունենանք «Ճ. Կ. Պոլիս «Թօփանար»» պատմահի կից Անհմտ Գ. Սուրբամին անուան Մատենադարանին հայերէն ծեսագրերը, «Հանդէս Ամսօրեայ», Ապրիլ-Յունիս, 1967, էջ 183-196 յորուածում:
- 10.- Տես Der Nersessian S., Etudes Byzantines et Armeniennes, Byzantine and Armenian Studies, Imprimerie orientaliste-Louvain, 1973, Tom 1, p. 513:
- 11.- Տես Բ. Կազարյան, Ս. Մանուկյան, Մատենադարան, Արմենական բարոյական գրադարան և արտեստարան Լեսոն Չուզավագրեան: Թոփանարութ հայկական ձեռագրերը նկարութիւնները մեջ կատարութիւն ունենանք «Ճ. Կ. Պոլիս «Թօփանար»» պատմահի կից Անհմտ Գ. Սուրբամին անուան Մատենադարանին հայերէն ծեսագրերը, «Հանդէս Ամսօրեայ», Ապրիլ-Յունիս, 1967, էջ 183-196 յորուածում:
- 12.- Տես Ռ. Ս. Պոլոսան, Վիզանտիйские и древнерусские миниатюры, Москва, «Индрик», 2003, стр. 55. Ընորհակալուրյում ենք յայտնում ԵՊՀ Հայ արտեստի պատմութեան և տեսութեան ամբողջի դասախոս Զարգրիդ Յակոբեանին՝ խորհրդամբիր և դիզայնական արտեստին նորիտած ամերածեցած գրականութիւն արտամղելու համար:



Օսմանեան Սահմանադրութ հայութաց հունական մատանիլութեան մասնաւոր գույքը:

## ԾՈՎԱՆԿԱՐԻՉ ՑՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ, ՂՐԻՍԻ ԱՍԵՆԵԽ ՆՇԱՆԱՌՈՐ ՀԱՅԸ



Հայ նկարչութեան մեծագոյն դէմքն է ան ու համաշխարհային գեղանկարչութեան մէջ՝ ամենամ վաւերական ծովանդական նկարչիլոց: Ծնած է Ռուսական կայսրութեան հարաւային Ղրիմի նահանգի (Crimea) Թէորոսիա ծովերեան քաղաքարը: Ակրտութեան վկայացրին մէջ արձանագրուած է Յովհաննէս Այվազեան: Փորդ տարիքն ցոյց տուած է զծագրութեան հանդէպ մնձ սէր: Ռուսիոյ մէջ իր նկարչական կրորութիւնը աւարտելի եսք կայսերական բոշակլով կը մեկնի Երազպա, ուր կարծ ատեն մը Խուսիան մնայի եսոր կը վերապանա Ռուսիա եւ կը նշանակուի կայսրութեան նաւատորմի զինաւոր նկարչի: Ռուսական շրջանակներու մէջ յաճախ գործածուած է «Այվազովսքի վրձինին արժանի» բնաւարությունը:

Հիմնական արտայայտչամիջոցը իր նկարչութեան մէջ ծովի է, որուն յարափոխիս շարժումներուն միջոցով արտայայտած է իր զգացումներուն ու քենաները: Նկարած է ծովային խաղաղ նայրամուտներ եւ ամենի ալեկոդութիւններ, որոց մէկ կը պայքարին նարդիկ, նաւատայիններ եւ ճամբրութիւններ: Այսպիս ծովանդականներուն մէջ յաճախ կարելի է հանդիպալ լոյսին:

Այվազովսքին նաև մեծ հայ էր: Ան կրտսեր Եղբայրն էր Վիճնեննայի Շշանանաւոր միաբաններէն Գարբիէլ Այվազովսքի: Իր նկարներէն մէկը կը պատկերէ այս պահը, եր Լորտ Պայրըն ուսք կը դմէ Ս. Ղազար Կղզիի նաւահանգիստը, ուր զինք դիմաւորողներու շարքին կը տեսնենք նաև Եղբայրը: Նշանաւոր են այս իդաներկ պատմաները, որոց վկայ Ակրտութեան Օսմաննեան նաւատորմի ջախչախտուր եւ խորտակումը: Թէեւ ստացած եր նաև Օսմաննեան կայսրութեան կողմէ շքաններ (նկարազարդած էր Կ. Պոլսոյ Տոմա Պահէի պալատը), բայց Համբաւեան կոտորածներն եսք իր ստացած շքանշանները ծովը կը նետէ:

Այվազովսքի անոնք օրինաւեամբ կուտան Թէորոսիայի մէջ այն պատճառով՝ որ խմելու ջորով պահովված է քաղաքը: Մահացած է 1900-ին եւ քաղուած տեղույն Ս. Սարգսի եկեղեցւոյ մէջ: Իր պահանջանքը քերածուած է պատկերամրան-քանդարանի: